ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ՔՎԵԱՐԿԵ՛Ք ՄԻԱՅՆ ԱՅՍՊԵՍ

1. Ընտրողը ներկայացնում է իր անձը հաստատող փաստաթուղթը՝ անձնագիրը կամ անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ ձև N 9՝ տրված ԼՂՀ ոստիկանության կողմից, իսկ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը: **Լիազորված քվեարկությունն արգելվում է:**

2. Ընտրողի գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ստուգում է ընտրողի ինքնությունը, ընտրողների ցուցակում գտնում է նրա անուն-ազգանունը, դրա դիմացի դատարկ այունակում լրացնում է անձը հաստատող փաստաթղթի տվյալները, և ընտրողը ստորագրում է այդ տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված այունակում:

3. Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին, նրանից ստանում է մեկական քվեաթերթիկ՝ Ազգային ժողովի մեծամասնական և (կամ) համամասնական ընտրակարգերով ընտրությունների քվեարկությանը մասնակցելու համար:

4. Ընտրողը մոտենում է քվեաթերթիկներ կնքող հանձնաժողովի անդամին, ով համոզվելով ընտրողի՝ տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ, կնքում է քվեաթերթիկ(ներ)ը:

5. Ընտրողն անցնում է քվեախցիկ՝ քվեարկելու և քվեաթերթիկ(ներ)ի վրա տեղադրված դատարկ քառանկյուններից որևէ մեկում ✓ (վեաձև) կամ դրան նմանվող նշանով կատարում է համապատասխան նշում:

Ընտրողը նշում է կատարում այն թեկնածուի (կուսակցության) անվան դիմացի դատարկ քառանկյունում, ում կողմ է քվեարկում:

Քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո ընտրողը քվեարկության խցիկում քվեաթերթիկը ծալում է և մոտենում քվեատուփին:

6. Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն ընձեռում քվեաթերթիկ(ներ)ը գցելու քվեատուփի մեջ:

7. Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ դուրս է գալիս տեղամասային կենտրոնից:

ԼՂՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ